

**Մարզպետի տղակալ Լևոն Սարգսյանը մասնակցեց Օ-Դը Սենի պատվիրակության հետ  
կայացած հանդիպմանը 16.10.2014թ.**

Հոկտեմբերի 16-ին Տավուշի մարզպետարանում մարզպետ Հովիկ Աբովյանն ընդունեց Օ-Դը Սենի պատվիրակությանը, որի կազմում էին Օ-Դը Սեն վարչական շրջանի համաշխարհային նախագծերի տնօրեն Օտ Ռոնսեն Լոռասոն, նույն վարչական շրջանի Հայաստանի ծրագրերի ղեկավար Նոյեմի Բոնվառլեն, Ֆրանսիայի Հայկական հիմնադրամի գործադիր տնօրեն Սուրեն Գևորգյանը, նույն հիմնադրամի ներկայացուցիչ Միշել Պագումյանը, միջազգային համախմբվածության ծրագրի շրջանակներում Օ-Դը Սեն վարչական շրջանի կողմից գործուղված մասնագետ Սելին Մասոն: Ներկա էր նաև Տավուշի մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը: Քննարկվեցին Օ-Դը Սենի վարչական շրջանի կողմից ֆինանսավորվող և Տավուշի մարզում իրականացվող ծրագրերի ընթացքը, ապագա անելիքները: